# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

5 մարտի 2026 թվականի թիվ 23-Ա

ք. Երևան

### «ՀՈՎՆԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿՀ N 315 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով «ՀՈՎՆԵՏ» ՍՊ ընկերության ցանցային օպերատորի գործունեության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ 2026 թվականի մարտի 2-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Բավարարել դիմումը և ուժը կորցրած ճանաչել «ՀՈՎՆԵՏ» ՍՊ ընկերությանը 2021 թվականի հունիսի 10-ին տրամադրված ցանցային օպերատորի գործունեության ԿՀ N 315 լիցենզիան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀՈՎՆԵՏ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. մարտի 5
ք. Երևան